

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սույն թվականի հուլիսի 6-7-ը գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Հայաստանի և Սփյուռքի հոգևորական և աշխարհական անդամների:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով և ժողովականներին ուղղված Նորին Սրբության ողջույնի և օրհնության խոսքով:

Օրակարգում քննության առնվեցին հայրենական և եկեղեցական կյանքին առնչվող հարցեր: Անդրադարձ ունենալով առաջիկային նախարեսվող հորեյաններին՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը էական նկարեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասնակցությունը Եղևնի 90-ամյակի փարելիցին և Գրերի գյուրի 1600-ամյակի հորեյանին նվիրված միջոցառումներին, որոնց շրջանակում կարևորվեց հոգևոր, եկեղեցական բովանդակությամբ մշակութային, հրապարակչական և մի շարք այլ միջոցառումների անցկացումը: Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունեց նաև երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի վախճանումի 10-րդ փարելիցին նվիրված հանդիսությունների կազմակերպման ընթացքի մասին համապարասխան հանձնախմբի զեկույցը:

Ժողովի կողմից կարևորությամբ քննության առնվեցին նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կանոնադրության, ծխական համայնքների վերակազմակերպման, եպիսկոպոսաց ժողովի գումարման, ինչպես և թեմական կազմակերպական ու այլ հարցեր:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունեց նաև Նորին Սրբության Հարավային Ամերիկայի հայոց թեմեր, Ֆինլանդիա և Մեծ Բրիտանիա կապարած միջեկեղեցական և հովվապետական այցերի արդյունքների մասին հաղորդումը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխատանքներն ավարտվեցին հուլիսի 7-ին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*